

ՀԻՄՆԱՐԱՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայկական երկրաբանական հասարակությունը վերջապես ստացավ վաղուց սպասվող հիանալի նվեր՝ Հոդմիկ և Ռուզաննա Սարգսյանների հեղինակած *«Երկրաբանական տերմինների եռալեզու հանրագիտական բառարան»* (Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007, 672 էջ) ծավալուն աշխատանքը:

Բառարանը ընդգրկում է երկրաբանական և նրա հետ առնչվող շուրջ 4200 տերմին ու մասնագիտական բառակապակցություն: Այբբենական հերթականությամբ բերված են ռուսերեն տերմինը, հայերեն համարժեքը, անգլերեն անվանումը: Այնուհետև շարադրվում է տերմինի հայերեն բացատրությունը՝ հանրագիտական տեղեկատու բառարաններին բնորոշ ձևով ու բովանդակությամբ: Հնարավորության սահմաններում ընդգծվում է նաև տերմինի սկզբնալեզուն, տրվում է ծագումնաբանությունն ու ստուգաբանությունը:

Ինչքան էլ արդարացված է գրեթե պաշտամունքի հասնող մեր հիացմունքն ու հպարտությունը առ մայրենիին, այդուհանդերձ խոստովանենք, որ կան բնագավառներ, որոնցում օգտագործվող բառամթերքի պաշարը չի համապատասխանում ոլորտի զարգացման արդի մակարդակին և անկարող է լիարժեք սպասարկել հայախոս մասնագետին: Ներկայացվող բառարանը կոչված է հաղթահարելու երկրաբանության, երկրաքիմիայի և երկրաֆիզիկայի հայերեն տերմինների ցանկի վերոհիշյալ «բերացումը»:

Կատարված է ահռելի ծանր, պրպտուն, բարդ աշխատանք տերմինների առավել նշանակալի ցանկ ընդգրկելու համար, ներառելով ոչ միայն հանրահայտ, դասական դարձած, այլ նաև հատկապես նորագույն զարգացումներով պայմանավորված հասկացություններն ու անվանումները: Տերմինների սահմանումներն ու բացասությունները կազմված են գրագետ, ամփոփ, սեղմ և հստակ:

Ցանկացած երկլեզու թարգմանության ժամանակ առաջանում են ազգային լեզվամտածողությունների տարբերության, իսկ անունների պարզ փոխառության դեպքում նաև՝ հնչյունային անհամապատասխանության հաղթահարման խնդիրներ: Եռալեզու թարգմանության դեպքում բառերի և նրանց բովանդակության համադրումը ավելի է դժվարանում: Լրացուցիչ խնդիրներ են առաջանում նաև արևմտյան և ռուսական երկրաբանական դպրոցներում առանձին տերմինների տարընթերցման և մեկնաբանության հակասությունները:

Բառարանի հեղինակներից հիրավի պահանջվում էր դրսևորել երկրաբանության տարբեր ոլորտների իմացության բարձր մակարդակ, մասնագիտական մանրամասների ու նրբությունների տիրապետում, խրթին հասկացությունները առավել ընկալելի մատուցման կարողություն, որոնք և տվյալ բառարանի առավելություններից են:

Բառարանը կազմելիս հեղինակները օգտվել են ռուսերեն և անգլերեն լեզուներով մինչ այդ հրատարակված հանրահայտ մասնագիտական բառարաններից, ռուս-հայերեն առկա բառարաններից, ինչպես նաև հայալեզու դասագրքերում, մենագրություններում և հոդվածներում բերված առավել հաջողված թարգմանություններից:

Հեղինակները ստիպված են եղել ստեղծել նաև տերմինների հայկական նոր համարժեքներ, մեր կարծիքով հիմնականում հաջողված, առանձին դեպքերում գուցե և վիճահարույց: Վերջիններիս դեպքում ավելի լիարժեք լուծումներ հնարավոր է ստացվի որոշակի ժամանակ անց, երբ առօրյա կյանքն ինքը կմերժի կամ կհաստատի ու շրջանառության կառնի հայերեն նոր տերմինը: Ընդհանուր առմամբ, հեղինակներին հաջողվել է առանձին վրիպումներն ու անճշտությունները հասցնել հնարավորի նվազագույնին:

Բառարանը ծանրակշիռ ներդրում է հայալեզու երկրաբանությունում և նպաստելու է ոլորտի լեզվական մշակույթի ավելի բարձր մակարդակի կայացմանը:

Ռ. Տ. Միրիջանյան